

ՄԱՐԿ ՏՎԷՆ

(Samuel Langhorne Clemens):

«Լուսմալի» առաջիկայ համարում կտանք Մարկ Տվէնի «Ուսերիմ թշնամին» երգիծաբանական գրուածքը, ուստի աւելորդ չենք համարում ծանօթացնել «Լուսմալի» ընթերցողներին նորահեղինակի հետ, տալով համառօտակի նորահայտութիւնը և գրական արժանաւորութեան գնահատութիւնը, մանաւանդ, որ մեր գրականութեան մէջ շատ էլ ծանօթ դէմքերից չէ նա, եթէ ի նկատի չառնենք մի քանի մանր թարգմանութիւններ որ լոյս են տեսել «Մուրճ»-ի մէջ: Առ ալժամ տալով նորա փոքրիկ գրուածքներից մէկը, լոյս ունինք, որ «Լուսման» մօտիկ ապագայում հնարաւորութիւն կունենալ աւելի լալն չափով ծանօթացնել մեր ընթերցողներին նորա ինչպէս և առհասարակ ևրոպական առաջնակարգ գրական դէմքերի հետ: Թէև նրա գրուածքների մեծ մասի նիւթն է ամերիկական կեանքը իւր լալն կողմերով, որ ալնքան սուր և կծու կերպով ծաղրում է նա և ալդ կեանքին ծանօթ մարդը կարող է լիովին ճաշակել նրա հումորի քաղցրութիւնը, բալց և ալնպէս մեղ համար ես շատ ուսանելի կողմեր ունի, որպէս հանրամարդկալին պակասութիւնների երգիծաբանող տաղանդ: Նրա գրուածքների ալս ու ալն երեսում շատ անգամ մեր կեանքը՝ զարմանալով կը տեսնէ իւր, դժբախտաբար, չաջողութեամբ նմանահանած դէմքը:

Բոլորովին տարբեր մարդ է Մարկ Տվէնը իւր մասնաւոր կեանքի մէջ և իւր գրուածքներում, ասում է Բ. Նորտրոպ, որ վերջերս առիթ է ունեցել ալցելել Մարկ Տվէնին: Նրբ թերթում ես նորա գրուածքները, երեւակալում ես որ աշխարհումս նորանից ուրախ մարդ գտնել դժուար կլինի: Նորա իւրաքանչիւր խօսքը պիտի հանաք լինի, ամեն մի շարժուածքը ծիծաղի աղբիւր, իսկ ամբողջ կեանքը անընդհատ զաւե շտ

Այն ինչ Սամուէլ-Լահորն Կլեմանսի, — աղպէս է Մարկ Տվէնի իսկական անունը, — ամբողջ կեանքը շատ էլ ուրախ անցնողներից չէ։ Եւ ղժուար թէ աշխարհումս մէկը լինի, որի գլխին արքան «բախտի հարուած» տեղացած լինի, որչափ նորա գլուխն է տեսել։ Շատ էլ հնչտ բան չէ վաթսուն անցած մարդու համար ուրիշների պարտքերը վճարելու բռնան տակ մտնել արն ինչ բախտն աղպէս էլ վարուեց նորա հետ վեց տարի առաջ։

Նորարոպն ալցելել է նորան Նիւ-Յորկի հիւսիս. կողմն քնկած Ադիրոնդակ լեռներում ունեցած ամարանոցում և ահա ինչ է պատմում, — «ինքն ըստ ինքեան սպասում էի նշանաւոր գրողին տեսնել իւր ամարանոցում հանգիստ կեանք վալելիս Ադիրոնդակների գրկում, ախինքն կատարեալ անդրադ վիճակ անցնելիս. արն ինչ Մարկ Տվէնին գտալ խորասուզուած ամբողջապէս զբաղմունքների մէջ։ Ամեն օր, ինչ եղանակ էլ լինէր, անձրե թէ չոգ, միևնույն է, նա պատրաստում է հրատարակչի համար նոյն քանակութեամբ բառերի պաշար։ Ոչ հանգստութիւնը, ոչ զուարճութիւնները չեն կարող լետ կացնել պարտաւորութիւնից»։ Նշանաւոր երգիծաբանն ապրում է Ամերիկայի ամենասքանչելի լճերից մէկի «Սարանակայի հար. ափում գտնուող մի փոքրիկ գիւղական «Կոտտէլում» — ինչպէս կոչւում են ամերիկական ամարանոցները։ Այդ լճակի շրջակայքը ամերիկացի հարուստների սիրած զբոսավայրներից մէկն է, որտեղ նոքա ժողովում են ուրախ ժամանակ անցնելու և նաւակով զբոսանք կատարելու համար։ Այդ ուրախութեան, ժխորի բոլորովին հակառակ. պատկեր է ներկայացնում Մ. Տվէնի «որջը», ինչպէս կոչւում է նա իւր ամարանոցը։ Խիտ եղննի և մալրի անտառը երեք կողմից շրջապատում է նորա տունը, իսկ չորրորդ կողմից նաւում է սիրուն լճակին, որը իւր ալիքների ճղիւնը բերում հասցնում է նորան։ Իսկ թեթեւ քամին ամարանոցի դտի կոնի առաջ նստողի ականջին իւր անխռով սօսափիւնն է չշնջում։ Ջրերի հանդարտ զրոցը, մալրիների կատարների հեղիկ հառաչները մեծ երգիծաբանի խոհերի սիրած զուգակիցներն են կազմում։

Եւ ղժուար թէ աղ «Որջ»-ից աւելի գեղեցկագիր մի վալր լինի։

Միտեր Կլեմանսից զատ ամարանոցում ապրում են նորա

ամուսինը իւր երկու չափահաս աղջիկներին՝ միւս Սիւդիի և միսս Ալարալին հետ Նա շատ քիչ է դուրս գալիս տնից. միայն իւրաքանչեւ թախանձանքին՝ զիջանելով մէկ-մէկ պտոյտ է անում լճակի վրայ նոցա հետ Հարեանների մօտ գնալ-գալ չունի. ալը լեռների գիրկն է գալիս՝ լատկապէս անվրդով պարապելու համար. Եւ «Որջի» ընտրութիւնը միայն այն նպակով է եղել, որովհետեւ բաւական հեռու է ընկած միւս «կոտտէջներից» և խուզարկու աչքը զժուար կթափանցէ արտեղ:

Տնից մի քիչ հեռու, լճակի ափին, միստեր Ալեմանսի վրանն է դետեղած՝ ծառերի խիտ հովանու զրկում: Ամբողջ կահաւորութիւնը — մի աթոռ և մի հասարակ փալտէ սեղան: Ահա ալը համեստ, աշխարհից հեռու անկիւնումն է կերտում Մարկ Տվէնը իւր երկերը, օրական զրջի տակից 1800, երբեմն 2500 և նոյն իսկ 3000 բառ լոյս աշխարհ թողնելով:

Նա միշտ գրում է սովորական գրչով և տանել չէ կարող եանկիւնների համար գերադասելի նոր միջոցները — գրող մեքենաները, որ Ատլանտեանի միւս կողմն այնքան մեծ քաղաքացիութեան իրաւունք է ձեռք բերել:

Ամեն առաւօտ ժամը 10-ին նա քալլերն ուղղում է դէպի իւր մենարան վրանը և գործի կպչում. իւր պարապելու ժամըը նոյն ժլատութեամբ և ճշտութեամբ է գործ դնում, ինչպէս որ գործակատարը որ և է գրասենեակում: Չորսից մինչև եօթ ժամ պարապելուց լետոյ նորից տուն է դառնում և մնացած ժամանակն անցնում իւրաքանչեւի մօտ և հանգըստութեան զրկում: Այդ ժամանակ կամ կարողում է իւր սիրած հեղինակներից մէկը կամ նստելով դստիկոնի վրայ ամբողջապէս լճակի ծփանքը դիտելուն նուիրում: Լրագիր համարեաթէ չէ կարողում և առհասարակ փոստի հետ շատ գործ ունենալ չէ սիրում:

Նորա արտաքինը սովորական կերպարանքներից մի մեծ տարբերութիւն չունի: Ամենալատկականը՝ զօրեղ դիմագծերն են: Շատ գեղեցիկ դուլի ունի, զարդարուած սպիտակահեր և զանգուր մազերով: Թաղաղ ժամանակ Մարկ Տվէնի դէմքի արտալատութիւնն աւելի տխուր, — քան ուրախ է: Շատ հազիւ կը պատահի, որ ժպտալ, ամենազբաւարճալի ու զաւեշտական արկած պատմելիս էլ ինքը միշտ լուրջ է և սառն: Առհասարակ եթէ արտաքինից դատելու լինէինք, չէինք կարող ենթադրել, որ նա զուարճաբանել գիտէ կամ ընդունակ է:

Մեծ երզիծարանը խօսում կամ պատմում է մի փոքր ծոր տալով, բառերը ձգելով, երբեմնակի կանգ առնելով բառերի առաջ, բայց ի հարկէ ոչ ալնքան, որ պատմուածի տպաւորութիւնը կորչի: Մի առանձին ընդունակութիւն ունի ամենազուարճալի դէպքերն ալնպէս պատմելու, որ կարծէք սրտէ սիրտ բարեկամի կամ մերձաւորի մահուան մասին է խօսում: Այդ առանձնայատուկ խօսելու և պատմելու ունակութեան մասին բազմիցս է խօսուել և բացատրութիւն տրուել: Ոմանք ենթադրում են, որ աւելի ուժեղ տպաւորութիւն գործելու ցանկութիւնն է փալլում արդտեղ: Բայց ինչ նորան շատ մօտից ճանաչողներն ասում են, որ մանկական օրերից սովորութիւն է արդ: Մանաւանդ, որ կեանքի մէջ ալնքան դժբաղտութիւնների և արկածների է հանդիպել, որ արդ վեհութեան տպաւորութիւն թողնող արտաքինը միայն լուսախորութիւնների և անկաշողութիւնների հետեանք պէտք է համարել: Նորա կեանքն աւելի վէպի, քան իրականութեան պատկեր է կրում: Հեշտ է թուել, բայց նա հետզհետէ փորձել է օրավարձ մշակի, տպարանի ծառայի ու աշխատաւորի, նաւուղու (loeman), լրագրողի, ժառանգաւորի (clere) և ընթերցողի մաշող պաշտօնները:

Սամուէլ Կլեմանս ծնուել է 1835 թ. նոյ. 30-ին, Միսսուրի նահանգի Ֆլորիտայի մի փոքրիկ, լեռ ընկած գիւղում: Հայրը՝ Զօն — Մարշալ Կլեմանս, Տեննիսից Միսսուրի գաղթել է իւր որդու ծննդեան տարին: Մարկ Տվէնի նախահայրերից մէկը Կրովմէլի կուսակից Բոն Գրիգօրի — Կլեմենտն էր, որ Կարլոս I-ի մահուան քուէ տուեց, որի համար և Կարլոս II-ի վրէժխնդրութեան զոհ գնաց՝ զլխատուելով: Հէնց արդ ժամանակից նոցա ազգանունը Կլեմանտից արափոխւում է Կլեմանս:

«Փոքրիկ Սամը հազիւ երեք տարեկան էր, որ Ֆլորիդայից ընտանիքով փոխադրուեցան Միսսուրիի Աննիբալ գաւառը: Այդ ալն ժամանակներն էր, երբ երկաթուղի ասած բանը գոյութիւն չուներ արդ երկրներում և տեղափոխութիւնը կատարւում էր սովորաբար երկու սալով: մէկի մէջ լցնում էին տան բոլոր կահ-կարասին, իսկ միւսի մէջ տեղաւորւում էր ամբողջ ընտանիքը: Մարկ Տվէնի հայրը, որ մի չափազանց մոռացկոտ, ցրուած մարդ էր, թողեց փոքրիկ «Սամըն» պարտիզում աւազի հետ խաղալիս և ինքը դնաց: Նոցա գնալուց լիտոլ մօտ

երկու ժամ անցած երեխային պատահաբար գտնում են նոցա մօտ աղլակախներէից մէկը և տանում հասցնում «մոռացկոտ» հօրը ¹⁾։

Մանկութեան առաջին տարիները ապագայ երգիծաբանն անցրեց հօրեղբոր մօտ։ Բնականից թոյլ կազմուածք ունենալով, շատ էլ չէին ստիպում կարդալու։ Դորա հետեանքն աչն եղաւ, որ ընկերակիցների հետ անցնելով ամբողջ ժամանակը առիթ է ունենում ուսումնասիրելու հէնց ալի ժամանակից նոցա բնաւորութեան պակասութիւնը, ծիծաղելի կողմերը։ Փոքր ժամանակ տանջում էր և լուսնոտութեամբ։ շատ անգամ գիշերը նորան պարտիզում գրօսելիս էին գտնում։ Փոքր ժամանակ մի սովորութիւն էլ ունէր,—անկողնի պարագաները անդիտակցաբար տանել ծածուկ տեղեր թագցնել։ Շատ էր սիրում լողալ Միսսիսիպիի մէջ, թէև, ինչպէս ասում է, մինչև տասնհինգ տարեկան լինելը մի տասն անգամ խեղդուեց, բայց էլի կարգին լող չսովորեց։

Դպրոց շատ անկանոն էր լաճախում, ուստի և մի մեծ բան դուրս բերել աշնտեղից չէր կարող։ Իբրև ապագայ դրականութեան առհաւատչեալ կարելի է համարել ալի շրջանից միայն աչն, որ անվերջ հրաւէր էր կարգում։

1847 թ. հօրը լանկարծակի մահը 12 տարեկան «Սամին» ստիպում է տան հոգսը իւր վրայ աւնելու մասին մտածել։ Ալի ժամանակ նորա մեծ եղբայրը՝ Օրիան Կլեմանսը տպարանատէր և գաւառական մի լրագրի խմբագիր էր. ալի տեղ և առաջին անգամ մտնում է Մարկ Տվէնը։ Ալիտեղ էլ առաջին անգամ որոշակի աչքի է ընկնում նորա երգիծաբանելու ընդունակութիւնը։ Տպարանում ծառայում էր մի փոքրիկ տղայ Վ. Օլֆ անունով, որի գլխին և Մարկ Տվէնը սրում է իւր երգիծանքի լեզուն։ Երեխան բաւական հաստաղլուխներից էր, ուստի և ամէն մէկը սիրով օգտւում էր հանգամանքից որ և

¹⁾ «Մոռացկոտ հօր» ալսպիսի տիպը զարմանալի պիտի չթուալ նաև մեր կեանքի համար։ Դիլիշանից-Յրևան տանող կալարաններից մէկում Յրևանում լալտնի անձն. Կ*, իւր փոքր որդու հետ ճանապարհորդելիս «մոռանում» է երեխային կալարանում և գնում։ Ճանապարհին կառապանին հարցնում է, «այ տղա, կարծես որ եկալ մօտս մի բան կար, ինչ եղաւ»։— Աղա, բա երեխէն էր էլի, որ թողիր «ստանցումը»...

է անմիտ լանձնարարութիւն անելու նորան: Մի անգամ Մ. Տիէնը նորան պատուիրեց գնալ մի «վլոր քառակուսի» դնել: Խեղճ երկխան քաղաքի բոլոր խանութները տակն ու վրայ արեց, բայց ապսպրած ապրանքը՝ դեռ չէր ստացուել: Մի ուրիշ անգամ նորան ուղարկում են «օձի բուրդ» դնելու, մի ալլ անգամ «չոր Բուր» բերելու և ալլն: Վօլֆի պարտականութեան մէկն էր և մրերի զլանները պատրաստել: Մինչդեռ նա իւր գործին էր կեցած, Կլեմանսը անդադար փոքրիկ աղջիկներին ուղարկում էր նրա մօտ և հարց ու փորձ անել տալիս իւր գործի մասին. ահապէս որ այդ բանը ամեն անգամ ահաբաժնի ժամանակ էր խլում նորանից, որ գործը ժամանակին չէր հասցնում: Վերջապէս խեղճ Վօլֆի համբերութիւնը հատաւ և Սամի քթին ահապիսի մի հարուած իջեցրեց, որ վերջինս երկար ժամանակ ալլ եւ նորա «զահլէն» չէր տանում:

Տպարանական «սատանի մօքոք»-ից հետզհետէ դարձաւ «տպիչ», լետոյ անցաւ խմբադրական մասը և բաւական պատասխանատու պաշտօններ ստանձնեց լրագրի հրատարակութեան բաժնում: Մի շաբաթ մինչև իսկ խմբադրի պաշտօն վարեց: Այդ կարճ միջոցում ահաբաժնի կծու ակնարկներ տպեց քաղաքացիներից սորա կամ նորա մասին, որ այդ մի շաբաթում 300 բաժանորդ աշխատեց: Երբ եղբայրը՝ Օրիոնը քաղաք վերադարձաւ վիրաւորուածների բողոքներին չափ չկար: Որոշուեցաւ տասնհինգ տարեկան «Սամին» բաւական ծանօթացած համարել եղբոր «սուրհանդակի» հետ: Ինքն էլ շատ չէր ցանկանում մնալ եղբոր մօտ. աշխարհ տեսնել էր ուղում. ուստի լարմար բոպէից օգտուելով փախաւ Նիւ-Եօրք և մտաւ Ջօն Գրինի տպարանը: Այդտեղից շուտով թողնում հեռանում է Ֆիլադելֆիա և մտնում «Ledger»-ի խմբադրատունը:

Երկու տարուց լետոյ այդ էլ է թողնում և ձեռք է դարկում ուսումնասիրելու նաւուղղու պաշտօնը. և երկու տարուալ ընթացքում ամբողջ Միսիսիպի 1375 մղոն տարածութեամբ իւր հինգ մատնեբի պէս գիտէր: Ամբողջ եօթ տարի նաւի փոքրաւորի պաշտօն էր վարում: Այդ ժամանակ Սամուէլ Կլեմանսի կեանքում մի շատ վշտալի դէպք է պատահում, որ երբէք չէ կարողանում մոռանալ: Իւր փոքր եղբորը՝ Հենրիին էլ համոզում է նաւուղղու պաշտօն ընդունել: Եղբոր հետ Միսիսիպիի վրայ նաւարկելիս մի անգամ կուռւմ է նաւապետի հետ, թողնում նաւը և հեռանում, իսկ եղբայրը մնում է նա-

ւի վրայ, Հետեւեալ առաւօտեան հէնց նաւի շողեկաթսան պարթում է, որից և ֆլաստուելով նորա եղբայրը մեռնում է: Մարկ Տվէնը այնուհետեւ միշտ ինքն իրեն էր մեղադրում այդ դժբաղդ դէպքի պատճառով: Իսկ իւր Մ. Տվէնի համար այդ անակնկալ կռիւը նախաինամուկեան մի առանձին հոգատարութիւն էր համարում:

Երբ Հարաւային և Հիւսիսային Ամերիկայի մէջ պատերազմ ծագեց Մ. Տվէնը թողեց իսկույն ամեն ինչ և զինուոր գրուեցաւ հարաւայինների շարքում, թէև այդ պաշտօնի մէջ միայն հինգ շաբաթ մնաց: Այդ ժամանակ նորա եղբայրը՝ Օրիոնը զինուորական նահանգապետ է նշանակուում Նեվադա: Մարկ Տվէնը թողնում է զինուորութիւնը և եղբոր հետ գնում, իբրև նորա անձնական քարտուղար: Այդ երկար ճանապարհորդութիւնն ստիպուած էր սալակով կատարել, որից և ապագայում իւր գրուածքների մէկի նիւթը քաղեց:

Նեվադայում եղած ժամանակ աշխատակցուս է Վիրգինիա-Սիւի հրատարակող «Enterprise» լրագրին Jock կեղծանունով, որը լստոյ փոխեց Mark Twain-ի ¹⁾: Այդ կեղծանունը նորան շատ դուր եկաւ և այնուհետեւ այդպէս էլ ստորագրում է: Այդ ժամանակ քիչ մնաց, որ նա աշխարհիս հարուստներից մէկը պիտի դառնար, հետեւեալ և գուցէ գրական աշխարհը պիտի զրկուէր այդպիսի մի մեծ տաղանդից: Բայց բաղդն այլ կերպ տնօրինեց: Նեվադայում եղած ժամանակ մի ոսկեհանքի մշակողի հետ ոսկու մի շատ հարուստ երակ գտան և վճռեցին միասին արդիւնագործել: Երկրի օրէնքի համաձայն գտնողը տասն օրուաւ ընթացքում պարտաւոր է լալտնել այդ մասին կառավարութեանը, ապա թէ ոչ շահագործելու իրաւունքն անցնում է ուրիշին: Կլեմանսն ու իւր ընկերը միմեանց վրայ լոյս դնելով, գործը երեսի վրայ թողին: Եւ երբ մի քանի շաբաթից լստոյ վերադարձան, որ-

¹⁾ Այդ կեղծանունը առաջ էր եկել նաւուղու պաշտօնից: Նաւուղին չափում է գետի խորութիւնը և ամեն անգամ բարձրաձայն լալտնում չափի քանակը, որպէս զի նաւը ճանձաղի վրայ նստելուց անվտանգ աղատուի: Կլեմանսի պաշտօնից, որ նա միշտ կրկնում էր ջրաչափի քանակը, առաջ է եկել և այդ կեղծանունը: Twain=երկու. Mark twain=նշանակիր երկու. By the mark four; by the mark twain—she shoals այսինքն նաւը չէ կարող առաջ գնալ անվտանգ:

պէս զի իրենց գտած ոսկու երակը շահագործեն, տեսան զարմանքով որ այդ անօրինակ հարուստ հանքն արդէն շահագործւում է ուրիշի ձեռքով։ Այս անյաջողութիւնն է լինում պատճառ, որ նա ստանձնում է Enterprise-ի խմբագրութիւնը երկու տարի շարունակ։

1864 թուին քսան և ինը տարեկան, թողնում է Վիրգինիա-Սիտին և անցնում է Սանֆրանցիսկօ, ուր և Gall լրագրի թղթակցի պաշտօն է ստանում, որ միայն երկու ամսաչափ է վարում, որովհետև մի առանձին սէր չունէր լրագրական «նապաստակ» լինելու։ Այդ ժամանակ ամերիկական լրագիրները, նոր մտած սովորութեան համաձայն, մարդիկ էին որոնում հեռււոր տեղեր ուղարկել լատով — թղթակիցներ։ Ս. Կլեմանս ուրախութեամբ ընդունւում է Սիւն լրագրի կողմից առաջարկած պալմանը և գնում է Գվինէյա անտեղի շաքարի մշակութեան գործի մասին թղթակցութիւններ գրելու Միացեալ Նահանգների մալրաքաղաքի թերթի համար։ Շուտով Uni ու-ի մէջ լոյս են տեսնում նորա գեղեցիկ նկարագրութիւնները։ Կալիֆօրնիա դառնալով, հետեւեալ տարին մի հասարակական գասալիսութիւն է կարգում Սանդուիչեան կղզիներում իւր գլխին եկած արկածների մասին։ Այդ գասալիսութիւնը նորա առաջին փորձն էր։ Երկտասարդ գրողի առանձին, ինքնուրոյն ոճն ու լեզուն կապում է նորա հետ հասարակութիւնը։ Այդ գասալիսութիւնները նորան տալիս են 100 ֆունտ ստերլինկ, 1867 թ. երևում է նորա «The Jumping frog», որը ուշադրութիւն է գրաւում ընդհանրապէս և իւրև հետեւանք դորա Alta California լրագրի խմբագրութիւնից առաջարկութիւն է ստանում երթալ Եւրոպա և Պաղեստին իւր լատով Quaker City նաւով։ Այդ ճանապարհորդութեան ժամանակ է հաւաքում Մ. Տվէնը իւր նշանաւոր գրութիւններից մէկի «Innocents abroad» («Արտասահման գնացող Պարզամիտներ») — ի նիւթը։ Ապագայում նա շատ անգամ էր շնչտում, որ իւր «Պարզամիտները» աւելի օգուտ տուին իրեն, քան լուսալի էր առհասարակ պարզամիտներից։ Երեսուն և չորս տարեկան էր երբ գրում էր այդ աշխատութիւնը, որ դորանից երկու ամիս խլեց միայն։ Իրիքը շատ մեծ ընդունելութիւն գտաւ և ծախուեցաւ մօտաւորապէս 1,000,000 օրինակ, Quaker City վերալ ճանապարհորդելիս էր, որ Մ. Տվէնն առաջին անգամ ծանօթացաւ իւր ապագայ ամուսնու՝ միսս Օլիվիա Լանկտօնի

հետ, որ Նիւ-Յօրքի Բուֆալօ քաղաքի ամենահարուստ ոսկեհանքերի տիրոջ Ջերմիս-Լանգտօնի դուստրն էր։ Շատ ծիծաղելի է, թէ ինչպէս նա իւր ապագայ աներոջից խնդրեց նորա աղջկայ ձեռքը։

—Միստեր Լանգտօն,—արտասանում էր նա իւր սովորական ծաղրող շեշտով,—արդեօք մի նոր բան չէք նկատել իմ և ձեր աղջկայ լարաբերութեան մէջ։

—Ոչ, պատասխանում է մ. Լանգտօնը։

—Այդ դէպքում,—շարունակում է Մ. Տվէնը,—խորհուրդ կտամ աչքներդ չորս բանալ և կտեսնէք։

Աղջկայ հարսանիքին, իբրև օժիտ, միստեր Լանգտօնը 1870 թ. ընծայեց մի շքեղ տուն և The Buffalo Express-ի արդիւնքի մի երրորդ մասը, որ ամերիկական ամենարդիւնատէտ լրագիրն էր այն ժամանակ։ Պատմում են, որ Մ. Տվէնը երբ իմացաւ որ աներն աղջկիսի շքեղ տուն է նուիրել իրեն, նորան իրաւունք տուեց «ամեն ժամանակ զալ իրենց տունը և նոյն իսկ դիշերել» եթէ կամենար։

Այդ ժամանակներից արդէն Մարկ Տվէնի փառքի ու հարստութեան հիմքն է դրւում։ Անգլիալուստ նորա երգիծաբանական դասախօսութիւնները հաագին ազմուկ են հանում։ Հետզհետէ դուրս են գալիս նորա գրչի տոկից նորանոր երկեր, որոնցից նշանաւորներն են «Ոսկէ դար» 1873 թ.—«Adventures of Tom Sawyer» — «Թոմա Սոուէրի արկածներ», 1876 թ.—«Պարզամիտների ճանապարհորդութիւնը»—1880 թ.—«Արքայազն ու Աղքատը (The Prince and the Pauper)» «Միսիսիպիի կեանքը» (Life on the Mississippi) 1883 թ.—«Հեքլբերի-Ֆիննի արկածները» (Adventures of Huckleberry Finn)—1885 թ.—«Ներգիծաբանական մատենադարան» — 1888 թ.—«Նանկին Արթուր արքայի պալատում»—1889 թ. և այլն և և այլն, որ համարեա ամենայն տարի լոյս է ընծալում։

Այս գրուածների մէջ բուն ամերիկական հումօրը փալւում է իւր բոլոր ճոխութեամբ և առաւելութեամբ, իրենց կենսունակ լաւատեսութեամբ։ Նւ պէտք է ասել որ այդ հումօրի ամենալաւ ներկայացուցիչն է Մարկ Տվէնը։ Նորա հերոսները, թէ մտացածին և թէ կեանքից առած, մեծ թէ փոքր պատկերանում են մեր առաջ ամբողջացած անխառն տիպեր, բուն գործնական բնաւորութիւններ, որ աշխատում են առնել, խիւլ կեանքից այն ամենը, ինչ որ գործնական խելքը,

ճարպիութիւնը, որժը և կեանքը վարպետ կերպով իրենց օգտին գործադրելու ունակութիւնը կարող է տալ: Այդ իսկական եանկիները և կեանքի գէժ առ գէժ հանդիպելն ու մաքառելն է նորա բոլոր գրուածների նիւթը, որի ժամանակ ծաղրի առարկայ են դառնում այն «innocents»-ը, որոնք կեանքի հետ չեն կարողանում «եօլա» գնալ: Երբեմն և Մարկ Տվէնի հումօրն աւելի խորն է թափանցում,—նա ոչ միայն կեանքի պայմանների ճաղրական կողմն է ընդգծում, այլ և այդ կեանքի պայմաններ կազմող հիմունքների զաւելտական և թոյլ կողմն է երևան հանում: Այսպէս օրինակ «Արքայադէն ու Աղքատ»-ի մէջ պարզ կերպով պատկերացնում է հաստրակութեան յարաբերութեան կախումը պատահականութեան խաղերից, որ հնումը կոչում էր ճակատագիր: Առհասարակ Մ. Տվէնի բոլոր երգիծաբանական գրուածների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում հեղինակի անսպառ երևակալութեան ուժը, որով մէկը միւսից աւելի ծիծաղաշարժ գրութիւններ է ստեղծում իւր հերոսների համար, դորա հետ միասին և նորա նուրբ ծաղրի հանճարը, կեանքի այս կամ այն թոյլ կողմի ընդհանրացմամբ, որով երևում է թէ պատմողը մինչև որ աստիճան նրբօրէն դիտել և ուսումնասիրել է մարդկային բնաւորութեան թուլութիւնները:

1884 թ. նորա նախաձեռնութեամբ հիմնւում է Վերստեր և ը՞ հրատարակչական ընկերութիւնը, զնելով այդ գործի մէջ իւր ամբողջ կարողութեան երկու երրորդ մասը: Այդ ընկերութիւնն էր հրատարակում Գրանտի, Շերիդանի և այլ նամակները, որով և կարճ ժամանակ թէ ընկերութիւնը մեծ աւուն վաստակեց և թէ Մարկ Տվէնը միլիօնատէր դարձաւ: Սակայն տասը տարուց լետով ընկերութիւնը սնանկացաւ, որի հետ և Մարկ Տվէնի վիճակը բոլորովին փոխուեցաւ: Իւր ժամանակի ամենաապահով գրողից աղքատների շարքն անցաւ, այդ բաւական չէ, ընկերութեան վարկը դեռ ևս պահպանելու համար նորա ամբողջ պարտքը իւր վրայ առաւ: 1895 թ. օգոստոսին բոլոր պարտատէրերին լալտարարեց.

—Նա համաձայն եմ ձեր բոլոր պարտաւորակների 50% հէնց այժմ վճարել, միայն այն պայմանով, որ մնացած կէսը վճառելու ժամանակ տաք, որի համար իմ ազնիւ խօսքը ձեզ գրաւական:

Սովորական մարդկանցից մէկը նորա տեղ երբէք իւր վրայ չէր վերցնի քսան հազար ստերլինգ ընկերութեան պարտ-

քը, ալ կրաւականանար իւր պարտաբաժնի վճարումով, ընկերութեան գործերը ղաղարեցնելուց լետով։ Ուրիշ շատ քիչ գրող կ'վարուէր Մ. Տ. սէս,—գրաւ դնել իւր ուղեղն ու ընդունակութիւնները ահա տեղ, որտեղ կարելի էր բոլորովին փախուստ տալ։ Բայց նա ալ կերպ վարուեց քան սովորական մարդիկ և երկու տարուաւ ընթացքում վճարեց ընկերութեան բոլոր պարտքերը։

Ապա Զեմա Վ. Պեջի հետ ընկերանալով նոր կատարելագործուած տպարան է բանում. բայց ալ տեղ էլ բախտը չէ ժպտում և ստիպուած է լինում կորցնել նորից քսան հազար ստերլինդ։ Ալէ է պատճառը որ փոխանակ ապահով, հանգիստ կեանք վարելու իւր կարդէջում, նա ստիպուած է օրական որոշ քանակ բառ տալ իւր հրատարակչին։

Անշուշտ, շատ քչերի մտքով կարող է անցնել, որ Մ. Տվէնը, բացի լաւ երգիծաբան լինելուց ունի և մի քանի դործնական փոքրիկ գիւտեր... Ալ տեսակի գիւտերից են առանձին տեսակի կախարաններ, լուշտետր, որ բացւում է միշտ ցանկացած երեսը և ալքում։ Վերջինս բաւական մեծ օգուտ տուեց նորան, որովհետև կարճ ժամանակում տարածուեցաւ 100,000 օրինակից աւելի։

Մ. Տ. ալ ժամ 67 տարեկան է, առողջ՝ թէ մտաւորապէս և թէ մարմնով։ Կեանքի վրալ նալում է շատ սառը փիլիսոփայական հալեցակէտով, որը ոչ մի դժբախտութիւն և անլաջողութիւն երդուել չէ կարող։ Շատ մեծ սէր ունի դէպի ընտանեկան կեանքը և բոլորովին զոհ ու երջանիկ է իւր ընտանեկան նեղ շրջանով։ Հիւր գնալ չէ սիրում, իսկ ակմբանոցը չէ հետաքրքրում նորան։ Շարաթական մի օր հիւրերի ընդունելութեան է նուիրում (joviality), որոնք անթիւ, անհամար են։ Սիրում է ընկարդ և ամենալաւ խաղացողներից մէկն է համարւում։ Մի քանի տարի առաջ հեծանուի սիրահար էր, իսկ ալ ժամ ալ էլ է թողել։ Շատ թունդ ծխողներից է. օրական մինչև քսան գլանակ է ծխում։ Բանաստեղծներից ամենից շատ սիրում է Բրոունենգին, իսկ պատմական մեծ անձնաւորութիւններից—Նապօլէօնին։